

# ՊԱՏՄԱ - ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԵԺ ՄԿՐՏՉԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ  
Պատմական գիրությունների դրվագն, պրոֆեսոր

## ՀԱՅ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 340-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Կոստանդին Մեծ կայսեր մահվանից հետո Հռոմեական կայսրությունը բաժանվեց Երա երեք որդիների միջև: Մայր առած գարակալական պայքարն ուներ կրոնական գումավորում: Այդ պայքարում հաղթանակած կոստանցիոս I-ը (337-361) հաղածեց Նիկիայի 325 թվականի առաջին տիեզերածովովի սահմանած սկզբունքների հետևորդներին և հարեց արիստական ներձվածին<sup>1</sup>: Կայսրությունում ստեղծված խառնակ պայմաններում հայոց թագավոր Տիրամը (338-348), որ գամ էր բարձրացել Հռոմի կայսեր սատարմամբ, սկզբնապես վարում էր հռոմեանու քաղաքականություն: Նրա գարակալության չորրորդ տարում, 341 թ., Հայոց Հայրապետական Աթոռը ժառանգեց Գրիգոր Լուսավորչի ոռո Հռոմիկը<sup>2</sup> (Վրթանեսի որդին):

Հայոց Փավասոս Բուզանդի, Տիրամը դեռևս իր թագավորելուց առաջ փեսայացրել էր Հռոմիկը՝ կնության տալով նրան իր դատերը: Պատմագրի հավատմամբ, Հռոմիկը «մինչ դեռ մանուկն էր... լուսավոր կիմա»<sup>3</sup>: («Մանուկ» արտահայտության տակ նա անշուշտ մկանի ունի Հռոմիկի պատանեկան տարիքը): Այս ամուսնությամբ հայոց արքունիքը կամենում էր շարունակված տեսմեն Լուսավորչի տան սերունդը<sup>4</sup>, երկրի հոգևոր իշխանության ժառանգականությունը, գուցեն հայ-հռոմեական մերձակցությունը: Կարևոր նշանակություն ուներ նաև Հռոմիկ Կարողիկոսին հայոց արքունիքի հետ կապելու, նրա ազդեցության տակ պահելու կամխանոգությունը: Իբրև նոր և պատի փառապանծ ավանդների մարմնավորող, Հռոմիկը դրսնորեց հոգևոր մեծ արիություն՝ իր անձը զոհելով հայրենադիր, ուխտված գաղափարների խորանի առջև:

Բուզանդը գրում է, որ Հռոմիկը զայ համարէր զծառայելն միայն Քրիստոսի, անձին փառ համարէր. ոչ իմ ածէր ընդ միտ զմէր թագաւորին կամ ի աման կուսէ զպատուեալ... Որ իրոյ հարցն նմանեալ, և զեղրօն իրոյ Գրիգորի գօրինակ բերէր անձին իրոյ. զքիստոսն լուծն առանց ամենայն յապաղութեան ձգէր մինչև ի վահճան: Այդ պատճառով, շարունակում է պատմագիրը, «թշնամացեալ էր տուն թագաւորին ընդ մմա»<sup>5</sup>:

Տիրամի համեմատ Հռոմիկի դիրքավորումը հասկանալի պատճառներով անշրջեատմեր

<sup>1</sup> История Византии, т. I, Москва, 1967, с. 170-171.

<sup>2</sup> Տես Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Աբեղեամի և Ա. Թարութիւնամի, Տիգիս, 1913, III, ժԱ, էջ 269:

<sup>3</sup> Տես Փավասոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, III, Ե, էջ 10:

<sup>4</sup> Հմտ. Մ. Օրմանեամ, Ազգապատում, Ա.., Ս. Եղմիածին, 2001, էջ 153:

<sup>5</sup> Տես Փավասոս Բուզանդ, III, Ե, էջ 10-11:

Էր ձգում նրանց միջև: Ի լրումն դրա, կյանքից վաղաժամ հեռացավ Հուսիկի կողակիցը՝ Տիրամի դուստրը:

Թագավորի ու կաթողիկոսի միջև հարաբերություններն առժամապես հստակվեցին արտաքին-քաղաքական գործունետի ազդեցությամբ: Այդ առումով դրական հանգամանք էր, անշուշտ, Տիրամի կողմնորոշումը ինչպի Հոռմեական կայսրություն, ինչն ազդանշվեց թագավորի կողմից Հուսիկին ձեռնադրվելու համար Կեսարիա ուղարկելու փաստով: Երկու Արքուների միջնեկեղական հարաբերություններն ինչ-որ չափով խարսխվում էին նաև քաղաքական իրողությունների վրա, Արևելքում Հայաստանի, իբրև ինքնուրույն և զորեղ գործոնի, խաղացած կարևոր դերի իրատեսական գնահատմամբ:

Կեսարիայի մետրոպոլիտական Աթոռը, Ակատի առնելով Հայաստանի և նրա առաքելադրում Եկեղեցու անկախ դիրքը, հարկ է, որ առանց վերապահումների հարգեր Հայոց Եկեղեցու ինքնուրույնությունն ու առաքելականությունն: Անշուշտ, այս իրողությունը Ակատի ումի Փավստոս Բուզանդը, երբ գործ է, թե Կեսարիայում ձեռնադրվելիս՝ Հուսիկին բազմեցրին «Արքուն Առաքելոյն Թագէոսի»<sup>6</sup>:

Քրիստոնեական աշխարհի հետ Հայաստանի հոգևոր-Եկեղեցական առնչակցությունն ինքնին կարևորվում էր Արևմուտքի հետ քաղաքական միության հեռամկարով: Կեսարիա Հուսիկի առաքելությունը Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում սմուցում էր այն գաղափարը, որ Հայաստանը կղզիացած չէ, քանի որ համադաշն միության մեջ է քրիստոնեական աշխարհի հետ: Թագավորը ևս մեծ նշանակություն էր տալիս այդ առաքելությանը: Պատահական չէր, որ, տեղեկանալով Կեսարիայից Հուսիկի վերադարձի մասին, Տիրամը շքախմբի ու զորքի ուղեկցությամբ մեծ շուրջով դիմավորեց նրան Արտաշատի մերձակայքում գտնվող Տափերական կամուրջի մոտ<sup>7</sup>:

Քրիստոնեությունը, որպես պետական-պաշտոնական գաղափարաբանություն, ինքնին նպաստում էր Եկեղեցու ազդեցության մեծացմանը: Վերջինն շանում էր իր ձեռքում պահել ազգային-պետական և հոգևոր միասնության դրոշը՝ նպաստելով երկրի պետական հավաքական հիմնաշենքի ամրակայացման գործընթացներին: Սակայն դրան խոչընդոտում էին հեթանոսության վերապրուկները: Հազարամյակների անցյալ ունեցող հեթանոսական հավատալիքները մնում էին կենսունակ երկրի ոհցամոլ խավերում իող գտնելով հնավանդ կենսակերպում ու բարքերում: Դրան նպաստող գործոն էր և այն, որ նայ դրադրության բացակայության պատճառով քրիստոնեությունը դեռևս չէր հայացվել, խորն արմատներ չէր ձգել ժողովրդի ընդերքում:

Հեթանոսության հարատևմանը էականորեն նպաստում էր նաև հանգամանքը, որ նայ նախարարների գերակշիռ մասը կողմնորոշվում էր ինչպի Պարսկաստան, ուստի հանդուրժող էր վերջինիս կողմից հովանակուրվող հեթանոսության հանդեպ՝ կամա թե ակամա մերիսակելով Հայոց Եկեղեցուն: Այդ իրողության պատճառով ոչ միայն սրբում էր Հայաստանի կրոնական իրավիճակը, այլև խախտվում էր երկրի քաղաքական միասնությունը, խարիսխվում էին պետության և Եկեղեցու հիմքերը՝ կյանքի կոչելով հասարակական-քաղաքական և հոգևոր-բարոյական հակամարտ միտումներ:

<sup>6</sup> Տե՛ս Փավստոս Բուզանդ, III, ԺԲ, էջ 26:

<sup>7</sup> Նոյն տեղում:

Հեթանոսական բազմատվածությունը հայ նախարարների կողմից հանդուրժվում էր նաև այն պատճառով, որ այն նպատում էր ավատական տարանջատվածությանը, մինչդեռ քրիստոնեական միաստվածությունն իր միակուր ու միաձիր արժենիմակարգով ու գաղափարաբանությամբ համախմբում էր երկիրը հոգեորապես և քաղաքականապես՝ ի դերև համելով հզոր հարևանների ազդեցությունը և նախարարների անջատամետ հակումները: Ուստի Հայոց թագավորության և Եկեղեցու հիմքերն ամրապնդելու համար անհրաժեշտ էր զորացնել քրիստոնեական հավատն ու նրա միջնաբերդը հանդիսացող Հայոց Եկեղեցին և երկրում ամրապնդել քրիստոնեական պաշտամունքն ու օրինակարգը և հնարավորին միաբանել ընդդիմանարտ ուժերին:

Ելմելով ուժերի իրական հարաբերակցությունից, Տիրան թագավորը հանդուրժամտություն էր ցուցաբերում Բեթանոսամետ նախարարների Ակատումամբ՝ հարուցելով Բոգուր դասի դժգունությունը: Վերջինս Հուսիկի գլխավորությամբ կողմ էր Բեթանոսության դեմ արմատական միջոցների գործադրմանը: Այդ հոդի վրա չէին կարող չըրվել նախարարների, նրանց հովանավորող հայոց թագավորի ու Եկեղեցու հարաբերությունները: Ըստ Փավստոս Բուզանդի, Հուսիկը խիստ հանդիմանում էր նախարարներին ու թագավորից՝ դատապարտելով նրանց մեղսամբ վարքութաքը, ուստի «ժնամի համարեալ թուեր... Եւ այս մարտ պատերազմի էր սորա առ հասարակ ընդ ամսմեսեան յանդիմանութեան զամենայն ասուր կենաց իւրց»<sup>8</sup>:

Եկեղեցու և թագավորի ու նրա կողմնակից նախարարների միջև հակամարտությանը նպաստեցին նաև Հայաստանի ու Հոռոմի միջև ծայր առած լարված հարաբերությունները, որոնց պատճառով տեղի ունեցավ Տիրամի որդու՝ Տրդատի սպամությունը կայսեր կամակատարների կողմից<sup>9</sup>: Այդ արարքն ամեն նախազգուշացում էր հայոց թագավորին ու նախարարներին և նպատակ ուներ նրանց հեռու պահել սասանյան արքունիքից:

Հեթանոսության հանդեպ Տիրամի հանդուրժող Վերաբերմունքի պատճառով նրա և կաթողիկոսի միջև հույժ սրբած հարաբերություններն ի վերջո ունեցան ողբերգական հանգուցալուծում: Ըստ Մովսես Խորենացու, Հոռոմի Բեթանոս կայսր Հովհանոս (361-363) Տիրամին է համձնում իր Ակարեն պատկերը՝ Տիրամայելով այն գետեղել հայոց Եկեղեցուն: Անապով կայսրին, Տիրամը նրա պատկերը կանգնեցնում է Սոփիքի արքունական Եկեղեցուն: Սակայն Հուսիկը այն ձգում է ոտքերի տակ և ամարգում կայսրին: Ի տրիտուր կաթողիկոսի այդ վարմունքի, Տիրամը հրամայում է բրածեծ ամել նրան: Այդ կերպ Հուսիկը տաժամամարի է արվում<sup>10</sup>:

Հայաստանի ու Հոռոմի միջև լարված հարաբերություններն իրենց կնիքը թողեցին նաև Հայոց Եկեղեցու Ակատումամբ թագավորի Վերաբերմունքի վրա: Ստեղծված իրավիճակում Տիրամը չէր հանդուժում Եկեղեցու արևմտամետ դիրքորոշումը, որն ամրարի էր իր քաղաքական ուղղագիծն: Թագավորը բնական մղումով ջանաց Եկեղեցին ենթարկել իր գերա-

<sup>8</sup> Փավստոս Բուզանդ, III, ԺԲ, էջ 27:

<sup>9</sup> Մովսես Խորենացի (III, ԻԱ, էջ 281) Տրդատի սպամությունը դնում է Արշակ II-ի ժամանակ, բայց ավելի հավամական է, որ այն կատարվել է Տիրամի օրոք, տես Հայ ժողովրդի պատմություն (բազմաթատորյակ), Բ. Ա., Երևան, 1984, էջ 85-86:

<sup>10</sup> Տես Մովսես Խորենացի, III, ԺԴ, էջ 272:

կայությանը, ինչին ընդուհմացավ կաթողիկոսը՝ Տիրամին մեղադիկով Արա Բեթանոսաբարո վարքի համար:

Փավստոս պատմիչի գրչի տակ հառնում է Հուսիկի ու Տիրամին միջև տեղի ունեցած բախման ողբերգական տեսարանը, որտեղ կաթողիկոսը բացահկ կորովարտությամբ մնում է աներեր, չդավելով իր կոչմանն ու հոգեւոր հավատամքին՝ ամեն պատեր առիթով քննափետում է թագավորին Բեթանոսության հանդեպ Արա ցուցաբերած հանդուրժամտությանը:

Կաթողիկոսը նույնիսկ բանադրամքի է ենթարկում Տիրամին, և ինչպես վկայում է Բուզանդը, հայոց Բովակապետն արքային «կապէր մեծապէս պատուհասիք քահանայական իշխանական բանի յանդիմանութեան»<sup>11</sup>:

Հուսիկը նույնիսկ արգելեց Տիրամին ու Արա շքախմբի մուտքը Եկեղեցի, որի պատճառով արքայի հրամանով բրածեծ արքեց Հայոց լուսադաշան Հայրապետը: Այնութեան կիսակենդան Հուսիկին մերձավորմերը տեղափոխում են Լուսավորչի տաճ Բայրենատիրույթ, Բարձր Հայքի Դարանայաց գավառի Թորդան գյուղ, որտեղ նա վախճանվում և հանձնվում է հոդին՝ նոր և պապի կողքին<sup>12</sup>: Հստ Մովսես Խորենացու, Հուսիկը կաթողիկոսի պաշտոնը ստանձնել է «ի չորրորդ ամին Տիրամա»՝ այն վարելով «ամս Վեց»<sup>13</sup>: Տիրամը գահակալել է 338 թվականից, Բետուաբար՝ Հուսիկի ալթոռակալությունն ընկառում է 341-347 թթ.:

Հայոց Հայրապետի Եղերական մահի ծանր հարված հասցեց Հայոց Եկեղեցուն: Այս փաստուն գումարում էր Բեթանոսության, պարսկամետ ուժերի հաղթանակը: Էապես ընկավ Եկեղեցու Բետինակությունը: Բուզանդը ցավով նշում է, որ Հուսիկի սպանությունից հետո «հայ լեզվով խոտող Թորգոնական աշխարհը մնալով առանց առաջնորդի, մոլորքոց կույրերի պես... չկար մեկը, որ Արանց մեջ պատկառանք գցեր», ետ պահեր «մոլեգին գործերից ու մեղքերից»:

Պատմագիրը նկատի ունի, ամշուշտ, Բեթանոսաբարո խավին, որոնք ոչինչ չէին հասկանում կամ Բիշով իրենց լսած քարոզմերից և տարված էին «Բեթանոսական Բին սովորություններով, խուժադուծ ու Վայրենաբարո մտքերով և սիրում էին իրենց առասպելների երգերը, վիպասանությունները, կորչկում Արանցով, հավատում էին Արանց»<sup>14</sup>:

Այս մթմոլորտում Բեթանոսական մոլեկորս ամրութիւն գործ դարձան նաև ուրիշ հոգևորականներ: Պատմագիրը նշում է, որ Բեթանոսության Բետուարդներն «անացող չէին իմաստուն խրատների, չէին հնազանդվում հոգեւոր առաջնորդների քարոզած Աստծու պատգամներին և Արանցից ստացած հանդիմանության համար ատում, հալածում և սպա-

<sup>11</sup> Տե՛ս Փավստոս Բուզանդ, III, ԺԲ, էջ 27:

<sup>12</sup> Նոյն տեղում, էջ 28:

<sup>13</sup> Մովսես Խորենացի, III, ԺԱ, էջ 269, ԺԴ, էջ 272: Պատմագիրը գրում է, որ Հուսիկի սպանության պատճուղ Տիրամի ներ է ծառացել Ուշումիքի Զորա նախարարը, որին սակայն նա Բամարում է Հովհանոս կայսեր ժամանակակից (Առվան տեղում, III, ԺԵ, էջ 273), ուստի կասկածելի է դրա վավերականությունը (հմմտ. Գ. Խալատին, Արմանական պատմություններ, 222):

<sup>14</sup> Տե՛ս Փավստոս Բուզանդ, III, ԺԳ, էջ 29-30:

նում էին գրանց՝<sup>15</sup>:

Փավստոս Բուզանդը, խոտացներով գոյսները, ժողովոյին պատկերում է լքված և ուղեկորում հոտի վիճակում: Ըստ երևության դա Աքրգործեց նաև Հուակի երկվորյակ որդիների: Պապի ու Աթանագինեսի վրա, որոնք բնավ չինեւնեցին իրենց հորն ու պապին, Բրածարվեցին Ս. Գրիի իմաստությունների մեջ խորամուխ լինելուց և իրենց նվիրեցին զիմական գրադարձների:

Երկրում ստեղծված հոգևոր խառնաշվորթությունը Տիրամին և նախարարների մի գգալի մասին ստիպեցին կաթողիկոսի գամին առաջ քաշել ասորի եկեղեցակաների, որոնք, ըստ Փավստոս պատմիչի, ժողով գումարեցին, «խորհուրդ խորհեցան» և թագավորին համոզեցին Բայց Բայրապետ Աշամակել ազգով ասորի, Հայաստանում իր սրբակյաց վարքով հոչակած Դամիել քահանային, որը ժամանակին Գրիգոր Լուսավորչի կողմից ձեռնադրվել էր քրոնակոպոս, ապա կարգվել Տարոնի առաջնորդ<sup>16</sup>:

Գուցե Դամիելն ասորի քարոզիչներից մեկն էր և, Բավանարար, Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հոչակելուց առաջ նոյն քրիստոնեությունն էր տարածել Տարոնում և հարավային Հայաստանի այլ գավառներում<sup>17</sup>:

Ըստ Փավստոս Բուզանդի, «Մերումի սուրբ մեծն քրիստոնակոպոսն Դամիել, այր սքամչելի» դեռև Գրիգոր Լուսավորչի օրոք դարձավ «տեսուչ և հոգաբարձու ամենայն եկեղեցեացն Հայոց մեծա մեծնայն տեղիս»: Պատմագրի հավաստմամբ, Դամիելը քարոզում էր նաև «ի կողման Պարսից», թերևս Պարսկահայութ: Դամիելի աշակերտ Ծաղիտան գրա կողմից կարգվել էր Վարդապետ-քարոզիչ Կորդուք գավառում, իսկ մյուս աշակերտ Եսիփամը՝ Աղձնիք և Մեծ Ծոփք նահանգներում: Դամիելի աշակերտներից էր նաև ամապատականների առաջնորդ Գիմոյը<sup>18</sup>:

Ասորի հոգևորականությունը, Ակսած IV դարից, որոշակի ազդեցություն ուներ Հայաստանի եկեղեցական կյանքում: Դրան մեծապես նպաստեց ասորական գրերի առկայությունը և դրանցով կրոնական գրքեր ունենալու, ասորերն ինքվով քարոզելու հանգամանքը: Սակայն ասորի հոգևորականները երբեք չդարձան Բայց ազգային շամերի արտա-

<sup>15</sup> Նոյն տեղում, էջ 30:

<sup>16</sup> Փավստոս Բուզանդ, III, ԺԴ, էջ 31: Ազաթամօնեղոսի հումարեն խմբագրությամ մեջ Գրիգոր Լուսավորչի կողմից Տարոնի եպիսկոպոսն է Աշամակում Աղրիսու (Աղրիանու) քուրմը (տե՛ս G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange, Vaticano, 1946, p. 102-103):

<sup>17</sup> Ե. Տէր-Մինասեանց, Հայոց Եկեղեցու յարաքերութիւնները Ասորոց եկեղեցիների նետ, Ս. Էջմիածին, 1908, էջ 22, 28:

<sup>18</sup> Փավստոս Բուզանդ, III, ԺԴ, էջ 31:

<sup>19</sup> Նոյն տեղում, էջ 37, 230-231: Ենթադրվում է, որ Դամիելան գրերի հմարողը նոյնանում կաթողիկոսն էր (Ի. Աճուր, Արմենիա Յուստինոս, Ս. Պետերբուրգ, 1908, ս. 351): Հ. Մարկվարտի կարծիքով, Դամիելը Արգմի եպիսկոպոսն էր (Բիշվում է 410 և 424 թվականների ասորական եկեղեցածողովներում) և քարոզչական նպատականներով հմարել էր Բայրեն տառեր: Եվ քանի որ Տարոնը սահմանակից էր Աղձնիքին (Արգմի), ուստի Դամիելը «կարող էր Բայրեն քարոզելու ամբողջ տառերի առջև կամճամած լինել» և այդ նպատակով հմարել Բայրեն գրեր (տե՛ս Հ. Մարկվարտ, Հայոց այբուբենի ծագումը և Ս. Մաշտոցի կենսագրությունը («Մետրոպ Մաշտոց» ժողովածու, Երևան, 1962, էջ 163-164): Հարավոր է, որ Դամիելը մասն փորձ կատարել է՝ օգտագործելով ասորական գիրը, բայց, ինչպես Բայրենի է, այդ փորձը դատապարտված էր ճախողման:

հայտիշմեր և չթեռնեցին Լուսավորչի տաճ հայրենաշում ավանդներին: Նրանք չատագովներն էին պարսկամետ կողմնորոշման:

Պատահական չէր, որ հետագայում, Հայաստանի առաջին բաժանումից հետո, երբ հայոց կաթողիկոսին արդեն նշանակում էին պարսից արքաները, Հայոց Եկեղեցու առաջնորդի գահաթոռին բազմեցին ասորի հոգևորականներ: Նրանց՝ հայոց կաթողիկոս կարգելու համգամանքը հետևանք էր պարսկական ազդեցության և բնավ չէր ներդաշնակում Հայաստանի պետական շամերին: Թեև Դամիելը հավատարիմ էր մնում Լուսավորչի պատգամներին, սակայն դա չէր հանգարում, որպեսզի նա դառնա ասորի հոգևորականության ձայնատարը: Հայոց թագավորի, Ամիսարարների հանդեպ իր անհաշտ դիրքը նա դրսուրում էր Արանց հերթանուարար արարքների դատափետմամբ, ինչն ի վերջո պետք է ուժնար իր հանգուցալուծումը:

Անշուշտ, Դամիելի բռնած դիրքից դժգոհ հայ Ամիսարարներն էին, որ մեկնեցին Եկեղեցից գավառի թիվ գյուղ, որի Եկեղեցում Դամիելը ծառայություն էր մատուցում Աստծուն: Նրանք Դամիելին տարան Արձանիքի Բառակչ գյուղ, որտեղ էր այդ պահին նաև Տիրան թագավորը: Ըստ Փավստոս Բուզանդի, Դամիելն անմիջապես սկսեց հանդիմանել թագավորին ու Ամիսարարներին՝ Արանց մեղադրելով կուապաշտության, «ագահության, զըրկողության, աղքատատյացության», սպանությունների և այլ մեղքերի համար<sup>20</sup>:

Անշուշտ, Դամիելը հենվում էր երկրում տակավին ազդեցիկ ասորի հոգևորականության վրա, արտահայտում նրա շամերը՝ ըստ այդմ շանալով որոշակի պահանջներ առաջադրել Հայաստանի աշխարհիկ իշխանություններին, նաև՝ թագավորին: Իր բռնած դիրքը չէր կարող հակադրություն չծնել նրա և Տիրան արքայի, Ամիսարարների միջև՝ հանգեցնելով ողբերգական հանգուցալուծման, թագավորի վճռական դիրքավորման պատճառով:

Դամիելին մնում էր նզովել հայոց թագավորին և Ամիսարարներին, որոնք անտեսում էին ասորի հոգևորականության ձգուումները: Վերջինիս հոգևոր-Եկեղեցական գաղափարանության արտահայտությունն էր անշուշտ, նույն պահին Դամիելի կատարած գուշակությունն, ըստ որի «քարձէ տէր զթագաւորութիւնն ձեր ի ձենջ բարձէ և զքահանայութիւնն ի ձենջ: Ցրուեսչիք և բաժանեսչիք. և ցրուեսցին սահմանը ձեր որպէս և Խարայէլ... և ամկչիք ի փառաց ձերոց և ի ձեռու օտար թշնամեաց մատնեսչիք դուք ի գերութիւնը և ի լուծ ծառայութեան»<sup>21</sup>:

Դամիելը հասկանում էր, որ այլև անհնար է հայոց թագավորին ընդիմանալը: Ուշագրավ է, որ թագավորի ու Ամիսարարների առջև հառնած չարախորհուրդ այդ գուշակությունից անմիջապես հետո նա ասաց, որ հրաժարվում է հայոց հայրապետի պաշտոնից՝ նշելով, որ չի կարող առաջնորդ լինել «այնոցիկ» որք ոչ դառնալցեն զկնի Տեառն, չեն հետևում Աստծու պատվիրաններին և «դարձուցին զթիկունս առ Տէր, և ոչ զերեսս իւրեանց»<sup>22</sup>:

Հասկանալի է, Տիրանը բնավ դեմ չէր քրիստոնեությանը և ոչ էլ կամենում էր Հայոց Եկեղեցին զրկել հովապետից: Բայց նա համոզված էր, որ Դամիելը չի արդարացմի իր

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 34:

<sup>21</sup> Տեսն նույն տեղում, էջ 35:

<sup>22</sup> .Փավստոս Բուզանդ, III, ԺԴ, էջ 36:

բովանդակությունը, ուստի, հակառակ որոշ նախարարների խնդրանքին, Տիրամն առանց վարանելու հրամայեց խնդրամարտ անել Դամիելին: Թագավորի հրամանն անմիջապես ի կատար ածվեց<sup>23</sup>:

Մովսես Խորենացին, Փավստոս Բուզանդի հետևողությամբ, նույնպես Դամիելի սպանության պատճառ է համարում Վերջինիս կողմից թագավորին ուղղված նախատիմքները<sup>24</sup>: Բոլոր պարագաներում Եկեղեցու երկու առաջնորդների Ակատմամբ հաշվեհարդարը միտում էր Եկեղեցին դարձնել արքայի կամքին Իլու-Ռենազանդ: Հասկանալի է, Դամիելի Ակատմամբ հայոց թագավորի վեռական Վերաբերմունքն ուժգնորեն հարվածում էր ոչ միայն ասորի հոգևորականությամբ, այլև ասորամեռ այն կերպականներին, որոնք, ի դեմս Դամիելի, տեսանում էին Հայաստանի ինքնակալի իշխանությամբ հակազդող Բեդիմակավոր ուժի: Նրանք այդահետո շանում էին դիմադրձնել թագավորի իշխանությամբ՝ իրենց հրամար անցանկալի ու ծայրահետ դրսերումներին՝ դրանք անհարիր համարելով իրենց հոգևոր իրավագործությամբ:

Եղերամարտ արված ըմբռաս Դամիելի փոխարեն Տիրամը կամնառում էր Եկեղեցու գլուխ կարգել օրինակատար հոգևորականի՝ ի դեմս Աղրիանույան Փառեմի: Վերջինս Փավստոսի մոտ ումի «Փառեն երեց», իսկ Մովսես Խորենացու մոտ՝ «Փառներսեն ոմն» բնորոշումը:

Հաստ Փավստոսի, նոր կաթողիկոս ընտրելու համար հրավիրվեց ժողով՝ թագավորի, նախարարների և բարձրաստիճան եկեղեցականների մասնակցությամբ: Թեև ժողովականները գտան, որ կաթողիկոսական պաշտոնի համար արժանի թեկնածու կարող է լինել միայն Լուսավորչի տոհմից սերող հոգևորականը<sup>25</sup>, սակայն ի վերջո վճռողը եղավ հայոց թագավորի կամքը, և կաթողիկոս առաջարկվեց Փառենը, որը, Մովսես Խորենացու հավատմամբ, հայրապետ կարգեց «Վասն ոչ կալոյ այր յայզգէ Գրիգորի»<sup>26</sup>:

Հաստ երևոյթին պատմագիրը Ակատի ումի այն հանգամանքը, որ Հուսիկի շվալտաբար որ որդիների մասնակից (կայծակնարար էին եղել մի քանի տարի առաջ) հետո մրանցից Ալթանագինեաը թողել էր մի արու զավակ՝ Ներսեսին, որը սակայն Կ. Պոլսում էր և տակավին դեռահաս էր համարվում կաթողիկոսի պաշտոնի համար, քանի որ նոր էր բոլորեւ իր 19 տարին: Գույք Փառենի ընտրությունը կանխորոշվել է նաև Լուսավորչի տան հետ նրա ունեցած հեռավոր ազգակցությամբ<sup>27</sup>, ինչը ժամանակին պատճառ էր դարձել, որպեսզի նա քահանա կարգվեր այդ տոհմի սեփական տիրույթ Աշտիշատում:

### 23 Նույն տեղում:

24 Մովսես Խորենացի, III, ԺԴ, Էջ 272: Պատմագիրը կարծում է, որ, ի հաստուցում Դամիելի սպանությամ, Բետազայում Տիրամն արժանացավ երկնառաք պատուիսի և խնդրամարտ արվեց իր որդու: Արշակ թագավորի հրամանով, եթե խիստ խոսքերով կշտամբեց Վերջինիս, Այրարատից թագավորի եղանորորդներ Գմելին ու Տիրիին Աղիովիստ և Արքերամի գավառներ հեռացնելու պատճառով (Անյ տեղում, III, ԽԲ, Էջ 283): Այս վկայությունը վիպակամ երանգներ ունի: Նույն բնույթի եմ նաև Փավստոսի կողմից Տիրամի կորացման պաթիմ նրա շուրջերին դրված խոսքերը՝ Հուսիկի և Դամիելի սպանության պատճառով իրեն հասած պատուիսը դիտելով իրոն իր գործած չարիքի հաստուցում (տես Փավստոս Բուզանդ, III, Ի, Էջ 46):

25 Փավստոս Բուզանդ, III, ԺԵ, Էջ 38:

26 Մովսես Խորենացի, III, ԺԶ, Էջ 275:

27 Հմտ. Մ. Օրմանեամ, Ազգապատում, Ա, Էջ 169:

Մովսես Խորենացին գրում է, որ Փառեաը (Փառեաթսեհը) կաթողիկոսի պաշտոն ստանձնեց «ի տասներորդ ամի Տիրամայ» և գարակալեց «ամս չորս»<sup>28</sup>: Հստ այդմ նա աթոռակալել է 348-352 թվականներին: Բուզանդը հաղորդում է, որ Տիրամը Փառեան սպարապետ Վասակ Մամիկոնյանի և ավագ նախարարների հետ ուղարկել է Կեսարիա՝ ձեռնադրվելու<sup>29</sup>: Մովսես Խորենացին չի հիշում այս մասին: Անհավաստի է համարվում Կեսարիայում Փառեան ձեռնադրվելու մասին վերոնշյալ տեղեկությունը<sup>30</sup>, ինչը սակայն պատմական հիմքից գուրկ չէ և հստակվում է տվյալ պահին Հայաստանի և Հոռմեական կայսրության միջև նշմարվող հարաբերությունների լուսի մերքը:

Հայոց արքան, հաշվի առնելով Արևելքում Հոռմի ազդեցության մեծացումը, վերակողմնորոշվեց նրա կողմը և կայսրության արևելյան քամակի տրամադրության տակ դրեց հայոց այրուձին, որը էական դեր խաղաց կայսրության թշնամիների դեմ մղված պատերազմներում: Տիրամի հոռմեամետ դիրքորոշման անուղղակի ապացուցն էր Փառեան Կեսարիա ուղարկելը<sup>31</sup>: Այն պետք է նպաստեր Հայաստանի և Հոռմի հոգևոր մերձակցությանը: Փատորեն Փառեան հայոց կաթողիկոսի գամին բազմեց հայոց Տիրամ թագավորի կամքով: Այդ հանգամանքը չէր կարող իր կնիքը չթողնել կաթողիկոսի գործելակերպի վրա: Բուզանդը շեշտում է Փառեան մեղմաքարո, համակերպվող Վարքը: «Նա, - հավաստում է մատենագիրը, - չէր համարձակվում խրատել կամ հանդիմանել որևէ մեկի մոլորությունը կամ ամբարիշտությունը: Նա միայն մաքուր էր պահում իրեն և ստիպված ընկերանում էր անօրեն արքային, հնազանդվում ու ընթանում նրա կամքով»<sup>32</sup>:

Նորընծա հովվագետող թերևս ջանում էր այդ կերպ բարեկավել Եկեղեցու և արքունիքի հարաբերությունները: Հարկավ, Եկեղեցին ընթացավ պետական համակարգի հետ միաշավի ուղեգծով: Դա կարևորվեց հատկապես Տիրամի թագավորության վերջին շրջանում, եթե պարսից Շապուհ Ա թագավորը պատերազմ սանձազերծեց Հայաստանի դեմ: Բախտորոշ այդ պահին երկրի հայրենասեր ուժերը համախմբվեցին թագավորի և Եկեղեցու շուրջը: Տիրամը բնականաբար փոխելու էր իր վերաբերմունքը մեթանոսամետ հայ նախարարների հանդեպ, սատարելու էր մեթանոսության դեմ տարկող պայքարին, քանի որ նախարարների գգալի մասը հակված էր արյաց արքայի կողմը, որը լայն աշակցություն էր ցույց տալիս Հայաստանում գլուխ բարձրացրած մեթանոսությանը:

Սակայն թագավորի հանդեպ Փառեան գուապ ու համակերպվող Վարքագիծը բացասական ներգործություն թողեց Եկեղեցու հեղինակության վրա: Կաթողիկոսի կրավորական բնավորությունից խրախուավելով, որոշ Եկեղեցականներ կարող էին դավել իրենց կոչմանը (հատկապես Փառեան որդի Հովհանն Եպիսկոպոսն աչքի ընկավ հոգևորականին անվայել զեղծաբարո Վարքով)<sup>33</sup>:

Տիրամին հաջորդած Արշակ Ա-ի թագավորության սկզբնաշրջանում, եթե Հայաստա-

<sup>28</sup> Մովսես Խորենացի, III, ԺԶ, Էջ 275:

<sup>29</sup> Փավստոս Փուզանդ, III, ԺԶ, Էջ 38:

<sup>30</sup> Մ. Օրմանեան, Ազգապատու, Ա, Էջ 169:

<sup>31</sup> Հ. Մանանդյան, Երկեր, Բ, Էջ 157:

<sup>32</sup> Փավստոս Բուզանդ, III, ԺԶ, Էջ 38:

<sup>33</sup> Սույն տեղում, VI, Ժ, Էջ 228:

զի ու Պարսկաստանի միջև հաստատվեցին խաղաղ հարաբերություններ, բացառվեց Լուսավորչի տոհմից հայոց կաթողիկոս առաջադրելով հնարավորությունը: Արշակ թագավորը և Ամիսարարները գերադասեցին հայուապես կարգել Աղքաղանույան տնից, որը չուներ արևմտամետ կողմնորոշում: Նոր կաթողիկոսի ընտրությունը նաև քաղաքական հոված կարևոր ձեռնարկում էր, որը վճռվում էր ոչ միայն արքայի, այլև ավագ նախարարների, քարձրաստիճան հոգևորականների կամքով:

Բուզանդը գրում է, թե Գրիգոր Լուսավորչի տոհմից կաթողիկոսի գահին արժանի թեկնածու չկար, ուստի ժողովականները հարմար գտան «ոմն Օահակի, որ Աղքաղանու եպիսկոպոսի տոհմից էր»<sup>34</sup>: Թեև Հուսիկի թոռը՝ Ներսեսը, տակավին ուստմանության մեջ էր Կ. Պոլսում, սակայն Արշակ Ա-ի համար դժվար չէր լինի նրան հայրենիք թերել (մանավանդ), որ Ներսեսն իր քոռշ՝ Բամբիշի որդին էր): Թեև Բուզանդը նշում է դարձյալ Ներսեսի երիտասարդ տարիքը իրուն կաթողիկոսի գահաթոռին բազմելու համար արգելատիթ հանգամանք, սակայն ուա չէր պատճառը: Թեկադրողը հայոց թագավորի, նրա կուսակից նախարարների քաղաքական շահախնդություններն էին: Տվյալ պահին կաթողիկոսի գահին պետք է բազմեր արևմտյան կողմնորոշում չունեցող հոգևորական, որպեսզի չհարուցվել սասանյան գահակալի կասկածանքն ու դժգոհությունը: Այդ տեսակետից Օահակն (իրուն չեզոք դիրքավորում ունեցող) հարմար թեկնածու էր:

Արշակ Ա-ի հասկանում էր, որ Աղքաղանույան տունը չուներ Լուսավորչի տոհմի ազդեցությունը, ուստի նրանից սերած Օահակը հարկ է, որ հյությամբ նմթարկվեր թագավորի քաղաքական կամքին, չէր դիմի հայ-պարսկական հարաբերությունները խաթարող որևէ քայլի: Թագավորն անցյալի փորձից գիտեր, որ Աղքաղանույանները Արշակունիների հանդեկ դրսերում են օրինապատշաճ գործեղակերպ, ինչն, իհարկե, չէր բացառում Գրիգոր Լուսավորչի տոհմի հոգևոր ավանդների հանդեպ նրանց հավատարմությունը:

Աղքաղանույանների դիրքորոշումը ազգային էր, և այդ հիմքի վրա նրանք առաջ էին տանում Հայոց Եկեղեցու կազմակերպման գործը<sup>35</sup>: Թերևս Օահակին կաթողիկոսի գահին առաջադրելու հանգամանքը կանխորոշվեց նաև այն իրողությամբ, որ ենուն Գրիգոր Լուսավորիչն այդ տոհմի նախնի Աղքաղանույան առաջ էր քաշել որպես իրեն տեղապահ՝ կարգելով Այրարատի նախկնակոս (իհարկե, հետագայում նա առաջնություն վերապահեց իր որդու՝ Արիստակեսին):

Ըստ Փավստոս Բուզանդի, Արշակ Ա-ն ու նախարարները նորընծա կաթողիկոսին համձանցին հայր մարդատին, ապա վերջինս և տասնմեկ ավագ նախարարներ Օահակին տարած կեսարիա, որտեղ նրան «ձեռնադրեցին Մեծ Հայքի կաթողիկոս և պատվով վերադառն թագավորի մոտ»<sup>36</sup>:

Այս վկայությունը կողմնակի ապացուց կարող է ծառայել նոր կաթողիկոսի ընտրութ-

<sup>34</sup> Նով տեղում, III, ԺԷ, էջ 39:

<sup>35</sup> Հմն. Հ. Ածոնց, Արմենիա և պահու Յուստինան, с. 353, Հայ ժողովորի պատմություն (բազմաթարյակ), Բ. II, էջ 79:

<sup>36</sup> Փավստոս Բուզանդ, III, ԺԷ, էջ 39: Մովսես Խորենացի Փահեմից հետո հայոց կաթողիկոս չի հիշում Օահակին, որին գիտն միայն իրուն Ներսես Մեծի հաջորդ՝ Սահակ անունով (տե՛ս Մովսես Խորենացի, III, ԼԹ, էջ 306):

յան ժամանակ մարդպետի խաղացած վճռորոշ ների մասին: Վերջինս թագավորի հեղինակավոր խորհրդատուու և Լուսավորչի տան երդվյալ ախոյան էր: Որպես Արշակունյաց թագավորի վարած քաղաքականության հետևողական պաշտպան, մարդպետը սատար էր կանգնում Աղրիանույաններին: Թե՛ հոգևոր և թե՛ պետական-քաղաքական ոլորտներում մարդպետները և Աղրիանույանները հիմնականում ունեին նույն դիրքորոշումը, որը հակազդում էր Լուսավորչի տան արևմտամետ կողմնորոշմանը: Մարդպետները դեմ էին եկեղեցական հողատիրությների ընդարձակմանը, Լուսավորչի տան ազդեցության ընդլայնմանը: Հասկանալի է, նրանց ուղեգիծը արժանանում էր Աղրիանույանների հավանությանը, թեև վերջիններս այդ խնդրում ևս գգուշավոր էին:

Մարդպետների նպատակն էր՝ Եկեղեցին դարձնել հյու-հնագանդ հայոց արքունիքին<sup>37</sup>: Օսմակն իր վարքով նպատելու էր նրանց ծրագրին: Նա Փառենի նմանակն էր իր մեղմաբարո, համակերպվող բնավորությամբ, ուստի թագավորը, նախարարները, ինչպես հավաստում է պատմագիրը, «չեն լսում նրա ճշմարիտ խրատները և համդիմանվելով անգամ, բացահայտորեն ու համարձակ գործում էին իրենց մեջքերը, առանց խոճի խայթի նյութերով ամեն տեսակ չարիքներ»:

Երկրում առհասարակ գգալի էր հեթանոսության ահագնացող տարերքը՝ սպառնալով կլանել «ի փոքրկանց մինչև զմեծամեծ»<sup>38</sup>: Հեթանոսության կողմը հակվածների մկանմամբ ցուցաբերված հանդուժամտությունն, անշուշտ, սոսկ կաթողիկոսի անձով չէր պայմանավորված: Այն գլխավորապես արդյունք էր հարևան Պարսկաստանի ազդեցության:

Անգամ հայ-պարսկական քաղաքական մերձակցության պայմաններում սասանյան դուռը չէր հրաժարվում Հայաստանում գլուխ բարձրացրած հեթանոսությանը սատար կանգնելու և հնարավորին իր հենարանը դարձնելու մտքից, ինչը բնականաբար, մերիակում էր Հայոց պետականության և Եկեղեցու շահերին: Ուստի խաթարվում էին հարևան երկու երկրների միջև ամբողջ քաղաքական մերձակցության եզրերը:

Ստեղծված իրավիճակում Հայաստանն ու Պարսկաստանը մնում էին հակոտնյա դիրքերում, մարմնավորելով իրարամերժ քաղաքակրթությունների՝ քրիստոնեության և զրադաշտական կրակապաշտության հակամարտությունն: Հայ Արաքելական Եկեղեցին հարկադրված էր դիմակայել հզոր հարևանի պետականացված կրոնի՛ կարելիության շրջանակներում ամրակայացնելով իր հիմքերը: Նա կարողացավ կյանքի կոչել հոգևորքարդական զորեղ կովաններ՝ ջանալով նորոգել երկրի հասարակական հարաբերությունները, թեկում մտցնել ժողովրդի աշխարհազգացողության մեջ:

Հետզինեւ Հայոց Եկեղեցին կարողացավ հավատացյալ ժողովրդին տանել քրիստոնեական քաղաքակրթության առաջադիմական ծիրով: Հեղաքելյալ այդ շրջափուլ սկսվեց Ներսես Մեծի կենսանորոգ բարեփոխումներով, որոնց շնորհիվ Էականորեն բարեշրջվեց Հայաստանի հոգևոր կեցությունը: Այն հիմք դարձավ հետագայում Սահակ-Մաշտոցյան դարակազմիկ ձեռնարկումների համար՝ կյանքի կոչելով ժողովրդական ոգու անախաղեապ վերապացը:

<sup>37</sup> L. Markwart, Sudarmenien und die Tigrisquellen, Wien, 1930, S. 155-156.

<sup>38</sup> Տե՛ս Փավստոս Բուղանի, III, ԺԷ, էջ 39: